Համաձայն
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01-ը փետրվարի
2016 թվականի թիվ 6 որոշման 5-րդ կետի պահանջների

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<10>> մարտի 2016թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2016 թվականի փետրվարի 1-ի N 6 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սամվել Շահբազյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Ցոլիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Լյուսյա Պողոսյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժին՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլխաթյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գոհար Խաչատրյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անահիտ Սարգսյանի, զարգացման ծրագրերի վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ Անահիտ Մխիթարյանի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ Հակոբ Սարգսյանի և իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Ձառիթափի համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ուսուցման, սոցիալական պաշտպանության, առողջապահության, կրթության, առևտրի և ծառայությունների, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, արտակարգ իրավիճակների և տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:

---

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ջառիթափի համայնքի ղեկավարին:

**Նորայր Սիմոնյան** (աշխատանքային խմբի ղեկավար) ______ /ստորագրություն/

**Սամվել Շահբազյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Արամ Կոստանյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Վանիկ Խուդավերդյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Նարինե Մաղաքյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Անահիտ Սարգսյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Ցոլիկ Բաբայան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Անահիտ Մխիթարյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն

**Լյուսյա Պողոսյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Սմբատ Խլխաթյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Գոհար Խաչատրյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Հակոբ Սարգսյան** (աշխատանքային խմբի անդամ) ______ /ստորագրություն/

**Խաժակ Դավթյան** (Ջառիթափի համայնքի ղեկավար) ______ /ստորագրություն/

# 2016 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք

## Զառիթափի համայնք

## Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Բնակչության տարահանման պլանավորում և կազմակերպում. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված համայնքային տարահանման հանձնաժողովի, տարահանման հանձնաժողովի հաստատված կանոնադրության, տարահանման հանձնաժողովի կողմից մշակված տարահանման պլանի առկայություն: | V Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծվել են տարահանման մարմիններ, հաստատվել է տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը | | Տարահան-ման պլան չի մշակվել, քանի որ չի պահանջվել | ՀՀ կառավարության 2011թ թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը սահմանելու մասին» N1180-Ն որոշման 16-րդ կետը, համաձայն, որի պետք է մշակվեր տարահանման պլան | առաջարկվում է մշակել տարահանման պլանը համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ | Մինչև 01.10.2016թ |
| 2. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն: | | | V պլանը չի մշակվել, | Չեն պահպանվել ՀՀկառավարության 2011թ հունիսի 10-ի <<Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները, համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից պետք է մշակվեր ուժեղ երկրաշարժի դեպքում գործողություններ ի պլան | առաջարկվում է մշակել պլանը սահմանված կարգով | մինչև 01.11.2016թ. |
| 3. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | | | V հայտեր չեն ներկայացվել | Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի <<Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը | առաջարկվում է ներկայացնել անհրաժեշտ հայտեր | մինչև 01.11.2016թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաստատելու մասին>> N919-Ն որոշման 7-րդ կետը, համաձայն որի ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն գործողություններ ի պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտեր պետք է ներկայացվեն | | |
| 4. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն | | V /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ | | Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համաձայն որի համայնքը պետք է ունենա սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ | Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով | Ֆինանսական հնարավորությունների առկայության ժամանակ |

## Հավելված 2. Սոցիալական պաշտպանության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և | | | V <<Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները | Թեքահարթակ չկա՝ <u>չեն պահպանվել</u> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի Տի | Կառուցել թեքահարթակ,մինչ այդ օգտագործել այլընտրանքային ժամանակավոր թեքահարթակներ | 01.06.2016թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: | | | հաշմանդամների և ամար ապահովում են սոցիալական ենթա կառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը>>: | մարմինները պետք է ապահովեին հաշմանդամների և ամար սոցիալական ենթա կառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմաններ: | | |

# Հավելված 3.Առողջապահության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Ապահովված են սպառման թափոնների հեռացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաճախականությունը՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, 2. +5⁰C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամեն օր հաճախականությունը: | | | V Համայնքում աղբահանություն չի իրականացվում, չի իրականացվել սպառման թափոնների հեռացման առնվազն երեք օրը մեկ անգամ իսկ +5⁰C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամեն օր հաճախականությունը: | **Չեն պահպանվել** <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ կետի և ՀՀ կառավարության 04.11. 2007 թվականի N 1161-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ, իրականացնում է սպառման թափոնների հեռացման առնվազն երեք օրը մեկ անգամ իսկ +5⁰C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ | Առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | Մինչև 01.05.2016թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | օրենսդրությամբ սահմանված ամենօրյա հաճախականությամբ աշխատանքները | | |
| 2. Առկա են աղբահանության սխեմաները, համաձայն որոնց իրականացնում են ոչ վնասակար թափոնների հավաքումը՝ սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը): | | | V Համայնքի ավագանին հաստատում է սանիտարական մաքրման սխեման | **Չեն պահպանվել** <<Աղբահանության և սանիտարական մաքրման>> մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19.1 կետի պահանջները, համաձայն որի համայնքի ավագանին պետք է հաստատեր սանիտարական մաքրման սխեման | Կայացնել համապատասխան որոշում և իրականացնել աղբահանություն | 1 ամիս |
| 3. Առկա են կոնտեյներներ, որոնք 1) ունեն կափարիչներ, 2) պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը, 3) ունեն մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ: | | | V Համայնքի տարածքում թույլատրված տեղադրման վայրերում, ինչպես նաև հանգստի գոտիներում, սպառման թափոնների ժամանակավոր կուտակման համար չեն տեղադրվել կոնտեյներներ | **Չի պահպանվել** բնակավայրերում տարածքային կառավարման մարմինների կողմից «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի սահմանված կարգով թույլատրված տեղադրման վայրերում, ինչպես նաև հանգստի գոտիներում սպառման թափոնների ժամանակավոր կուտակման համար տեղադրվում են կոնտեյներներ: | Առաջարկվել է տեղադրել կոնտռոյներներ | Ֆինանսական հնարավորություննրի առկայության դեպքում |
| 4. Կոնտեյներները տեղադրված են՝ բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: | | | V Համայնքի բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա, չեն տեղադրվել կոնտեյներներ | **Չի պահպանվել** ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 9-րդ կետը, համաձայն որի համայնքի բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա, պետք է տեղադրվեր կոնտեյներներ | Առաջարկվել է տեղադրել կոնտռոյներներ | Ֆինանսական հնարավորություննրի առկայության դեպքում |
| 5. Կոնտեյներները տեղադրված են ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա՝ պուրակներում, զբոսայգիներում՝ մարդկանց զանգվածային կուտակման վայրերից: | | | V Համայնքի պուրակներից զբոսայգիներից՝ մարդկանց զանգվածային կուտակման վայրերից կոնտեյներները ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա չեն տեղադրվել | **Չի պահպանվել** ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 9-րդ կետը, համաձայն որի համայնքի պուրակներից զբոսայգիներից՝ մարդկանց զանգվածային կուտակման վայրերից կոնտեյներները պետք է տեղադրվեն ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա | Առաջարկվել է տեղադրել կոնտռոյներներ | Ֆինանսական հնարավորություննրի առկայության դեպքում |
| 6. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ | | | V Համայնքում | **Չի պահպանվել** բնակավայրերում | Առաջարկվել է հնարավորինս սեղմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| կոնտեյներների հարակից տարածքի աղբը տեղափոխված է: | | | կոնտեյներներ տեղադրված չեն | տարածքային կառավարման մարմինների կողմից «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի սահմանված կարգով թույլատրված տեղադրման վայրերում, ինչպես նաև հանգստի գոտիներում սպառման թափոնների ժամանակավոր կուտակման համար տեղադրվում են կոնտեյներներ | ժամկետում ապահովել դրույթի կատարման պահանջները | |
| 7. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ կոնտեյներների հարակից տարածքը մաքրված է: | | | V<br>Համայնքում կոնտեյներներ տեղադրված չեն | **Չի պահպանվել** բնակավայրերում տարածքային կառավարման մարմինների կողմից «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի սահմանված կարգով թույլատրված տեղադրման վայրերում, ինչպես նաև հանգստի գոտիներում սպառման թափոնների ժամանակավոր կուտակման համար տեղադրվում են կոնտեյներներ | Առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետում ապահովել դրույթի կատարման պահանջները | |
| 8. Աղբահանության ժամանակ աղբակույտերը և տերևակույտերը այրված չեն: | | | V<br>Համայնքում աղբահանություն չի իրականացվում | **Չեն պահպանվել** <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ կետի, առողջապահության նախարարի 22.12.2009 թվականի N 25 հրամանի 2-րդ գլխի 16-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ. | Առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | Մինչև 01.05.2016թ |
| 9. Աղբահավաք կոնտեյներները ախտահանված են համապատասխան ախտահանիչ լուծույթներով (ամիսը 1 անգամ հաճախականությամբ): | | | V<br>Համայնքում կոնտեյներներ տեղադրված չեն | **Չի պահպանվել** բնակավայրերում տարածքային կառավարման մարմինների կողմից «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի սահմանված | Առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետում ապահովել դրույթի կատարման պահանջները | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | կարգով թույլատրված տեղադրման վայրերում, ինչպես նաև հանգստի գոտիներում սպառման թափոնների ժամանակավոր կուտակման համար տեղադրվում են կոնտեյներներ | | |
| 10. Աղբանոթները ախտահանված են համապատասխան ախտահանիչ լուծույթներով (ամիսը 1 անգամ հաճախականությամբ): | | | V<br>Համայնքում աղբանոթներ տեղադրված չեն | **Չի պահպանվել**<br>ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 20-րդ կետը, համաձայն որի համայնքի փողոցներում, այգիներում, պուրակներում, կայարաններում, շուկաներում, տոնավաճառներում, ստորգետնյա անցումներում, հրապարակներում, լողափերում տեղադրվում են աղբանոթներ, որոնք ունեն ոչ ավելի, քան 100 լ տարողություն | Առաջարկվել է տեղադրել աղբանոթներ և ապահովել դրույթի կատարման պահանջները | Ֆինանսական հնարավորություններ առկայության դեպքում |
| 11. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացված են (առնվազն երկու օրը մեկ անգամ): | | | V<br>Համայնքում աղբահանություն չի իրականացվում, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ չեն իրականացվում (առնվազն երկու օրը մեկ անգամ): | Չեն պահպանվել<br><<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 12-րդ կետի, առողջապահության նախարարի 22.12.2009 թվականի N 25 հրամանի 3-րդ գլխի 26-րդ կետի 3-րդ մասի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ է իրականացնում (առնվազն երկու օրը մեկ անգամ): | Առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | Մինչև 01.05.2016թ |
| 12. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի և աղբահավաք խցերի դեզինսեկցիայի ու դեռատիզացիայի աշխատանքներն իրականացված են (առնվազն երեք ամիսը մեկ անգամ): | | | V<br>Համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում դեզինսեկցիայի ու դեռատիզացիայի աշխատանքներ (առնվազն երեք | **Չի պահպանվել**<br>ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 26.2րդ կետը, համաձայն որի բազմաբնակարան շենքերի ընդհանուր ընդհանուր | Առաջարկվել է ապահովել դրույթի կատարման պահանջները | Մինչև 01.05.2016թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամիսը մեկ անգամ) չեն իրականացվում: | օգտագործման տարածքների, դեզինսեկցիայի (պայքար միջատների դեմ) և դեռատիզացիայի (պայքար կրծողների դեմ) աշխատանքները իրականացվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ | | |
| 13. Աղբատար փոխադրամիջոցների հետ առկա են. 1) փակ թափքեր, 2) աղբաջրերը հավաքող համակարգ, 3) կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք, 4) կոնտեյներները լվանալու համակարգ: | | | V Աղբատար փոխադրամիջոցնե րում առկա չեն աղբաջրերը հավաքող համակարգ, կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք կոնտեյներները լվանալու համակարգ | **Չի պահպանվել** ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 14րդ կետը, համաձայն որի աղբատար փոխադրամիջոցի կառուցվածքը ապահովում է աղբի խտացումը, ունենում է աղբաջրերը հավաքող համակարգ, կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք և/կամ կոնտեյներները լվանալու համակարգ | Առաջարկվել է ձեռք բերել համապատասխան տեխնիկա | Ֆինանսակա ն հնարավորութ յունների առկայության դեպքում |
| 14. Կոնտեյներները տեղադրված են ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա, որն ունի պատնեշ կամ մետաղյա դեկորատիվ ցանկապատ: | | | V Համայնքի պուրակներից զբոսայգիներից՝ մարդկանց զանգվածային կուտակման վայրերից կոնտեյներները ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա չեն տեղադրվել | **Չի պահպանվել** ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի 9-րդ կետը, համաձայն որի համայնքի պուրակներից զբոսայգիներից՝ մարդկանց զանգվածային կուտակման վայրերից կոնտեյներները պետք է տեղադրվեն ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա | Առաջարկվել է տեղադրել կոնտոյներներ | Ֆինանսակա ն հնարավորութ յունների առկայության դեպքում |

## Հավելված 4.Պաշտպանության բնագավառ բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբեր ված խախտումներ ը վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների առկայություն: | | Համայնքի ղեկավարը քաղաքացիա կան պաշտպանու թյան մարմինների գործունեությ անը աջակ- | | Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի, 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, ըստ որի համայնքի ղեկավարը պաշտպանության | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | Մինչև 01.06.2016թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ցության վերաբերյալ ընդունում է որոշում | | բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները. աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը. | | |
| 2. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավմանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն: | | Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավմանը աջակցության վերաբերյալ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներ չկան, Առկա է ընդհանուր ցուցակով, | | Չեն պահպանվել Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի և 36-րդ հոդվածի, 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ըստ որի 1.Համայնքի ավագանին հաստատում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,<br><br>2.Համայնքի ղեկավարը պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները. միջոցներ է ձեռնարկում զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ, աջակցում է զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը. | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | Մինչև 01.06.2016թ. |
| 3. Զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն: | | Սոցիալական խնդիրների լուծման վերաբերյալ աշխատանքներ տարվում են, սակայն համայնքի ղեկավարի որոշումներ չկան | | Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները, ըստ որի համայնքի ղեկավարը սոցիալական աջակցություն է ցուցաբերում զինծառայությունից արձակվածներին, պատերազմի վետերաններին | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 4. Բնակչության, հատկապես | | | Համայն | Չի պահպանվել | Առաջարկվել է | Մինչև |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| երիտասարդության ռազմա-հայրենասիրական դաստիարա-կությանը աջակցության վերա-բերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն: | | | քի ղեկավա րի որոշում ներ չկան | <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի, 2-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, ըստ որի Համայնքի ղեկավարը պաշտպանության բնագավառում իրականացնում է հետեւյալ կամավոր լիազորությունները. աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության, ռազմահայրենասիրական դաստիարակությանը | առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 01.06.2016թ |
| 5. Հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնա-կան հաստատություններում նախազորակոչային պատրաստության իրականացմանը աջակցության վե-րաբերյալ որոշումների և փաստերի առկայություն: | | Համայնքի ղեկավարի որոշումներ չկան | | Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի, 5-րդ կետի պահանջները, ըստ որի համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետեւյալ կամավոր լիազորությունները. աջակցում է ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության իրականացմանը վե-րաբերվող գործունեությանը | Առաջարկվել է աշխատանքներ տանել այս ուղղությամբ դպրոցի զինղեկների հետ | Մինչև 01.06.2016թ |

## Հավելված 5.Պարտադիր լիազորությունների բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբեր ված խախտումներ ը վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն: | | | V << Համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ>>: | Դրույթի պահանջները պահպանված չեն, . Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը | Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ | 1 ամիս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | | | V << Համայնքի ավագանին որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով >>: | Դրույթի պահանջները պահպանված չեն, . <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում կայացնի | Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ | 1 ամիս |
| 3. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | | | V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>: | Դրույթի պահանջները պահպանված չեն, . <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը | Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ | Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը |
| 4. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | | | V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը >>: | Դրույթի պահանջները պահպանված չեն, . <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը | Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ | 1 ամիս |
| 5. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն: | | | V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>: | Դրույթը պահպանված չէ, <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին պետք է ընդունի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | որոշում | | |
| 6. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն: | | | V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>: | Դրույթը պահպանված չէ, Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին ընդունում է որոշում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգի հաստատման վերաբերյալ | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 7. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն: | | | V Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը | Դրույթը պահպանված չէ, Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է ընդունում աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 8. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | | | V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>: | Դրույթը պահպանված չէ, Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի հաստատման վերաբերյալ | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |
| 9. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն: | | | V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>: | Դրույթը պահպանված չէ, Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, | Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | 1 ամիս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ | | |
| 10. Ամենամյա պարտադիր գույքագրման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | | | V<br>Համայնքի ավագանին որոշում է կայացնում ամենամյա պարտադիր գույքագրման վերաբերյալ | Դրույթի պահանջները պահպանված չեն,<br>. Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ավագանին որոշում է կայացնում ամենամյա պարտադիր գույքագրման վերաբերյալ | Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ | 1 ամիս |